

## 22 Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավարի

2014 թվականի հաշվետվություն

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ, հրավիրվածներ ես, Կողբավան համայնքի ղեկավարս, ներկայացնում եմ Ձեզ հաշվետվություն Կողբավան համայնքում 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

Ինչպես գիտեք Կողբավան համայնքն ունի բազում հիմնախնդիրներ, որոնցից հատկապես կառանձնացնելի խմելու ջրի բացակայության հարցը: Գյուղը խմելու ջրով ապահովելու հարցով զբաղվելուն զուգընթաց կազմակերպվում է համայնքի միջոցներով ջրի մատակարարումը հարևան Երվանադաշատ համայնքից՝ հատուկ այդ նպատակին ծառայող ԳԱԶ մակնիշի մեքենայով, որը շարաթական երկու անգամ խմելու ջուր է բաժանում համայնքի բնակչությանն անվճար հիմունքներով:

Համայնքն անելիքներ ունի նաև կրթության բնագավառում, քանի որ Կողբավանի դպրոցահասակ երեխաները սեփական համայնքում դպրոց հաճախելու հնարավորությունից զրկված են: Դպրոցահասակ երեխաներին հարևան Վանանդ համայնք, որտեղ կազմակերպվում է նրանց ուսուցումը, հասցնելու համար նա հատկացված է ավտոմեքենա ՌԱՖ մակնիշի, որն առավոտյան տանում և դասերի ավարտից հետո ետ է բերում նրանց համայնք:

2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքներից ես կառանձնացնելի նաև հողօգտագործողների միջև ստացված ազոտական պարարտանյութերի՝ պարկը 6000 դրամ արժեքով 320 պարկ, կալիումական պարարտանյութ՝ պարկը 7000 դրամ 34 պարկ, ինչպես նաև 5000 լիտր դիզելային վառելիքի՝ լիտրը 350 դրամ արժեքով բաշխումը:

Կատարվել է նաև սերմացուի բաշխում՝ առվույտ, գարի և եգիպտացորեն:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ցուցանիշների մասով .

Եկամուտների մասով պլանային առաջադրանքը կատարվել է 100,1 տոկոսով՝ պլանային 8425,9 հազար դրամի դիմաց հավաքագրվել է 8438,0 հազար դրամ եկամուտ, որն էլ ձևավորվել է հետևյալ ուղղություններից.

ՀՈՂԻ ՀԱՐԿ – պլանային առաջադրանքը կատարվել է 100,7 տոկոսով՝ 2800,0 հազար դրամի դիմաց 2818,5 հազար դրամ հավաքագրվելով:

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ գծով պլանային առաջադրանքը նույնպես գերակատարվել է՝ 185,0 հազար դրամ պլանի դիմաց արձանագրվել է 194,0 հազար դրամի մուտք:

Համայնքի սեփականություն համարվող հողերի ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐ - պլանային 1600,0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 1584,6 հազար դրամ: Պլանային առաջադրանքը կատարվել է 99,04 տոկոսով:

Հիսաթ պրակտան 8

Արմավիրի մարզի Կողբավան համայնքի ղեկավար

Պառույթյան  
Վահագնյան

Մուտքեր ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱԳԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ՝ կատարվել է պլանային առաջադրանքը՝ 200,0 հազար դրամ:

Համայնքն ունի ֆոնդային բյուջեի մուտք՝ համայնքի գույքին պատճառած վնասի փոխհատուցման նպատակով 50,0 հազար դրամի չափով:

Համայնքին տրվել է դոտացիա պլանային 3590,9 հազար դրամի դիմաց 3590,8 հազար դրամ:

2014 թվականի ընթացքում կատարվել են ծախսեր հետևյալ կտրվածքով՝

Աշխատավարձ՝ 6428,4 հազար դրամ:

Կազմակերպվել է տոնական միջոցառում ԿԱՆԱՆՑ ՄԻԱՄՍՅԱ տոների՝ կապակցությամբ:

Կազմակերպվել է ամանորյա տոնական միջոցառում:

Ընդամենը տոնական միջոցառումների կազմակերպման համար կատարվել է 373,9 հազար դրամ:

Կատարվել է էլեներգիայի վարձավճար 150,0 հազար դրամի չափով:

Գրենական պիտույքների ձեռք բերման համար, որոնք անհրաժեշտ են գյուղապետարանի աշխատանքների անխափան իրականացման համար ծախսվել է 180,0 հազար դրամ:

Համայնքի և գյուղապետարանի աշխատանքների իրականացման համար առաջանում է նաև տեղեկատվական ծառայություններից օգտվելու անհրաժեշտություն- այդ նպատակով ծախսվել է 62,4 հազար դրամ:

Համակարգչային ծառայություններից օգտվելու համար ծախսվել է 11,0 հազար դրամ:

Տրանսպորտային սարքավորումներ ընթացիկ և կապիտալ նորոգումներ են իրականացվել, որի համար ծախսվել են վարչական և ֆոնդային բյուջեներից համապատասխանաբար 99,0 և 136,9 հազար դրամ:

Համայնքի աշխատանքների աշխատանքների կազմակերպումն իրականացնելու, երեխաներին Հարեան Վանանդ համայնք դպրոց տեղափոխելու, ինչպես նաև խմելու ջրով համայնքն ապահովելու համար անհրաժեշտ վառելիքային նյութերի ձեռք բերման համար ծախսվել է 1000,0 հազար դրամ:

Համայնքի հիմնախնդիրներն են, ինչպես արդեն նշվեց-

1. Խմելու ջրի բացակայությունը
2. Կրթության բնագավառում՝ դպրոցաշինությունը
3. Գազաֆիկացումը

Համայնքի ղեկավար



Հ. Քոչարյան